(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ԼԻՎԱՐԴ ՇԻՆ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի համայնքապետարան ՀԿՀ-ի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ <<Ամիրաղյան Ունիվերսալ Գրուպ>> ՍՊԸ-ի՝ <<Նոյեմբերյանի համայնքապետարան>>-ի կարիքների համար՝ <<Նոյեմբերյան համայնքի <<Կողբի մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման աշխատանքներ>>-ի ձեռքբերման նպատակով 03.06.2025 թվականի թիվ 1 արձանագրությամբ հայտարարված թիվ <<ՀՀՏՄՆՀՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/04>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ <<ԼԻՎԱՐԴ ՇԻՆ>> ՍՊԸ և <<Մաքս-Վուդ>> ՍՊԸ կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումը անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջների մասին հայցը բավարարել **ամբողջությամբ**.

1.1. անվավեր ճանաչել <<Նոյեմբերյանի համայնքապետարան>>-ի կարիքների համար՝ <<Նոյեմբերյան համայնքի <<Կողբի մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման աշխատանքներ>>-ի ձեռքբերման նպատակով 03.06.2025 թվականի թիվ 1 արձանագրությամբ հայտարարված թիվ <<ՀՀՏՄՆՀՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/04>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ <<ԼԻՎԱՐԴ ՇԻՆ>> ՍՊԸ և <<Մաքս-Վուդ>> ՍՊԸ կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումը:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. **Վճռի <<Եզրափակիչ>> մասի 1.1. կետը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին**:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am